# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2020 թվականի N 238

### ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԱԲՈՎ ԱՇՈՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճնցի Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող ժամկետային զինծառայող Աբով Աշոտի Բաղդասարյանը 2020 թվականի սեպտեմբերի 27- ին սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ**.

1.Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող ժամկետային զինծառայող Աբով Աշոտի Բաղդասարյանի ընտանիքին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 (հարյուր հազար) դրամական օգնություն

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

30 նոյեմբերի 2020թ.
Նոր Հաճն համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը նոյեմբերի 2020 թ. N 239
Նոր Հաճն

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԳԻՍ ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արտակ Էդվարդի Մովսիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արտակ Էդվարդի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 19092014-07-0035 վկայական) Սարգիս Ջուլֆյան թաղամասի 8-րդ փողոցի 1 հասցեում գտնվող, 07-006-0006-0011 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 154.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 3.34 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Արտակ Էդվարդի Մովսիսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 157.74 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 331254 (երեք հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր հիսունչորս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից հաստատված 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 7 շինարարության թույլտվությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գագիկ Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը նոյեմբերի 2020 թ. N 240
Նոր Հաճն

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՐԵ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ***՝

1. Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 4-րդ թաղամասում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0015-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.02 հա այլ հող գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 5.65 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական: 07-006-0015-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.02 հա այլ հող հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման նշանակության:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 4-րդ թաղամաս, թիվ 34/2:

5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Ալբերթ Երեմի Սարգսյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցները և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ.Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը նոյեմբերի 2020 թ. N 241

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ՝***

1. Նոր Հաճն համայնքի Գայի փողոցում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 07-006-0030-ից ծածկագրի տակ գտնվող 0.002395 հա բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 23.95 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նշանակության խանութի մասը համարել Նոր Հաճն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Փոփոխել 07-006-0030-ից կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.002395 հա բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
3. Ընդունել ի գիտություն, որ՝

3.1 շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

3.2 շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3.3 շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):
5. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Գայի փողոց, թիվ 6/7/1 :**
6. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
7. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Անահիտ Արտաշեսի Հովհաննիսյանին ՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը դեկտեմբերի 2020 թ. N 242
Նոր Հաճն համայնք

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Արսեն Պետրոսյանի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Արսեն Պետրոսյանի և Անի Ղազարյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 3-րդ թաղամասի 1-ին փողոցի թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տան և քարե պարիսպի ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50· Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը դեկտեմբերի 2020 թ. N 243
Նոր Հաճն համայնք

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Լյովիկ Դավթյանի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Լյովիկ Դավթյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Ս.Ջուլֆյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ շինության ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-ը դեկտեմբերի 2020 թ. N 244
Նոր Հաճն

### ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՍՍ-ՍՈՒՂ-ՂՈՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վարդգես Լիպարիտի Եղիազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վարդգես Լիպարիտի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 13032018-07-0070 վկայական) Շասս-Սուղ-Ղոն փողոցի 1/5 հասցեում գտնվող, 07-006-0040-0172 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 84.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, 72.58 քառակուսի մետր մակերեսով ծածկոցները, 8.5 քառակուսի մետր մակերեսով աստիճան հարթակը և 0.7 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Վարդգես Լիպարիտի Եղիազարյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 166.58 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 349818 (երեք հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնութ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է իրավաբանական հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գագիկ Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 245

4-ը դեկտեմբերի 2019թ.
քաղ. ՆորՀաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արգիշտ Հարությունյան ԱՁ-ն*դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 27 հասցեի տարածքում գտնվող 48ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ №5690, 5691 անդորրագրերի դիմումատուն 2020 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի№ 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Արգիշտ Հարությունյան ԱՁ-ին* (վկայական№ 01Ա 008616) իր գործունեության վայրում՝Նոր Հաճն համայնքի Չարենցի 27 հասցեի տարածքում գտնվող 48ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

02-ը նոյեմբերի.2020թ.
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 246

27-ը նոյեմբերի 2020թ.
ք. Նոր Հաճն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Գեղամ Թանանյան ԱՁ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ ՆորՀաճն համայնքի Չարենցի 15/15 հասցեում գտնվող 32ք.մ. ընդհանուր մակերես ունեցողհիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով

Հաշվի առնելով, որ ըստ №, անդորրագրերի դիմումատուն 2020 թվականի 1-ին կիսամյակի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Գեղամ Թանանյան ԱՁ-ին* (վկայականՈ№ 80.1013613) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 15/15 հասցեում գտնվող 32ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020թվականի 2-րդ կիսամյակի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

27-ը նոյեմբերի 2020թ.
ք. Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 247

04-ը դեկտեմբերի 2020թ
Ք.Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համլետ Կուչերյան ԱՁ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տորոզյան 11/2 հասցեի տարածքում գտնվող 23ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 6193 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Համլետ Կուչերյան ԱՁ-ին* (վկայական42814234) ՆորՀաճն համայնքի Տորոզյան 11/2 հասցեի տարածքում գտնվող 23ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2020 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական,եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

04-ը դեկտեմբերի 2020թ
ք.Նոր Հաճն